ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 348 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 330-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հալիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ. Մկրտչյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2026 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին, տնօրենների ժամանակավոր պաշտոնակատարներին և տնօրենների պարտականությունները կատարողներին ամենամյա արձակուրդ տրամադրելու և նրանց պարտականությունների կատարումն այլ անձանց վերապահելու մասին» N 330-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1. 1-ին կետի «25 աշխատանքային օր» և 3-րդ կետի «օգոստոսի 17-ից» բառերից և թվերից հետո լրացնել «՝ բացառությամբ հավելվածի 36-րդ կետի» կետադրական նշանով, բառերով և թվով:

2. Որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հավելվածի 36-րդ կետում նշված՝ «Հալիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիանա Մկրտչյանին ամենամյա արձակուրդը տրամադրել մինչև 2026 թվականի հուլիսի 24-ը ներառյալ: Աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հուլիսի 27-ից:»:

2026-07-23 09:59:49 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 23
Ք. Կապան